ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 721Ա

19 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Շ. ԿՈՒՐՂԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 57-րդ հոդվածի 2-րդ մասով ,ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շ. Կուրղինյան փողոցի թիվ 5 տան բնակիչ Ռուզաննա Կիմի Խաչատրյանի դիմումը իրեն, Արմեն Ջանիբեկի Խաչատրյանին և Մաքրուհի Ջանիբեկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 01112019-04-0073 տրված՝ 01.11.2019թ., «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 19.12.2025թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04011WULSTYZ, 04011AFXC6XZ/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շ. Կուրղինյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Շ. Կուրղինյան փողոց, թիվ 5 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Շ. Կուրղինյան փողոց, թիվ 5/2 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 722-Ա

19 մայիսի 2026թ. ք.Էջմիածին

ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԱՐՄԵՆ ՉԻՐՔԻՆՅԱՆ ՄԿՐՏԻՉԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, առաջին տեղակալը, քննության առնելով թիվ ՎԻ 02/26 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նար-Դոս փողոցի թիվ 5 հասցեում «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց համապատասխան թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

«Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Բաղրամյան փողոց, 20 փող., թիվ 7 բն., պետ.գրանցման համար՝ 99.1308263/2023-04-03, ՀՎՀՀ՝ 49796293, անձնագիր՝ AV0465863, տրված՝ 05.10.2022 թվականին, 057-ի կողմից, ն/ք՝ 010301182) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նար-Դոս փողոցի թիվ 5 հասցեում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերով սահմանված պահանջները՝ առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի 06.05.2026թ. կազմված թիվ ՆԷ-1 և թիվ ՆԷ-2 արձանագրությունների հիման վրա 2026 թվականի մայիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում, որի անցկացման վայրի և ժամանակի մասին «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից 06.05.2026թ. կազմված թիվ ՆԷ-1 և թիվ ՆԷ-2 արձանագրությունները:

2. Հանձնաժողովի 18.06.2026թ. թիվ 02/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

3.«Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատիրոջ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստր քաղվածքը:

4. 11.05.2026 թվականի azdarar.am պաշտոնական հրապարակային ծանուցումների կայքում տեղադրված ծանուցման վերաբերյալ փաստաթուղթը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նար-Դոս փողոցի թիվ 5 հասցեում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի մայիսի 6-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի մայիսի 18-ին հրավիրվել է լսում:

«Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը, չնայած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված լինելով վարչական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում իրականացնելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը և իրացումը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար,

համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով տրվում է հանրային սննդի հասկացությունը, համաձայն որի հանրային սնունդը (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպումն է, իսկ հանրային սննդի ծառայությունը դա սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր է, նույն օրենքի 17-րդ

հոդվածի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում նշված օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Տվյալ դեպքում՝ «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նար-Դոս փողոցի թիվ 5 հասցեում կատարել է երկու վարչական իրավախախտումներ՝ առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և առանց համապատասխան թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերով, 23-րդ, 32-րդ և 35-րդ հոդվածներով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք՝

1) առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք իրականացնելու համար 100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով,

2) առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու համար՝ 80 000/ութսուն հազար/ ՀՀ դրամի չափով,

ընդհանուր՝ **180 000 /հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:**

2. Նախազգուշացնել «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատիրոջը, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, իսկ նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհինգապատիկի չափով:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

Ստորագրված է
19 մայիսի 2026 թվականին
Ք.Էջմիածին

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 723Ա

19.05.2026թ. ք. Էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն և 912-Ն որոշումների պահանջներով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 2026UNNKW9 և «Գլոբալ Փարթներս Գրուպ» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0536/ կողմից 09.03.2026թ. կազմված հատակագիծը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառույց իրականացնող անձն անհայտ է.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ամբերդ գյուղի Կոմիտասի փողոց թիվ 21/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.00853հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 71.08քմ / 71.08քմ արտաքին և 64,9քմ ներքին/ մակերեսով հասարակական նշանակության շինությունը համարել Վաղարշապատ համայնքի սեփականությունը:
2. 71.08քմ / 71.08քմ արտաքին և 64,9քմ ներքին/ մակերեսով հասարակական նշանակության շինությունը համարել օրինական:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ, ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7244

21 Դեկտեմբեր 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏ» ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Երևան քաղաքի Անտառային փողոցի թիվ 160/9 շենքի թիվ 17 բնակարանի բնակիչ Արա Մանուկի Տագէսեանը իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 06.12.2023 թվականին տրված N 06122023-04-0047 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Վաղարշապատ» ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0108-0009/, 0.9118հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 25.01.2021թ. թիվ ՄՈ/28-2021 որոշմամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 12.05.2026թ. թիվ 06 նիստի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Վաղարշապատ» ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0108-0009/, 0.9118հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, փոխադրել ավելի ցածրարժեք՝ վարելահող հողատեսքի:
2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Լ.ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7254

21 Դեկտեմբեր 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ «ԶՎԱՐԹՆՈՑ» ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ֆրանց Վերֆելի /նախկին Շոլոխով/ փողոցի թիվ 3 տան բնակիչ Օֆելյա Իվանի Խաչատրյանը՝ իրեն, Աննա Վարդանի Խաչատրյանին և Լիլիա Վարդանի Խաչատրյանին պատկանող /հիմք՝ «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ Արմավիրի մարզային մասնաճյուղի կողմից 03.07.2025թ. տրված N Ամ-970 արխիվային տեղեկանք, Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 15.10.2025թ. տրված թիվ 4304 քաղվածք, Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 15.10.2025թ. տրված թիվ 4304 տեղեկանք և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 26.03.2026թ. կազմված հողամասի հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Զվարթնոց» ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0319-0002/, 0.9հա /ըստ փաստացի չափագրության 0.6562հա/ մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 25.01.2021թ. թիվ ՄՈ/28-2021 որոշմամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 12.05.2026թ. թիվ 06 նիստի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի «Զվարթնոց» ԳԿՏ տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0319-0002/, 0.9հա /ըստ փաստացի չափագրության 0.6562հա/ մակերեսով գյուղատնտեսաննպատակային նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, փոխադրել ավելի ցածրարժեք՝ վարելահող հողատեսքի:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **Լ.ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 726Ա

22 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԳԱՅԱՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022 թվականի թիվ 24 որոշումը, հաշվի առնելով 12.01.2026 թվականին Միասնական Սոցիալական Ծառայության կողմից տրված թիվ Ե-030-26-001161 և «Աստղիկ Բժշկական Կենտրոն»-ի կողմից 25.12.2025 թվականին տրված եզրակացությունը, սոցիալական ծրագրերի և առողջապահության հարցերի բաժնի պետ Սամվել Վարդանյանի զեկուցագիրը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մաշտոց փողոցի 107 շենքի 27 բնակարանի բնակիչ Գայանե Ալբերտի Ալեքսանյանի ԿՏ և ՄՌՏ հետազոտության համար ֆինանսական աջակցություն տրամադրելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026 թվականի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից, «Էրեբունի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի 163318100050 հաշվեհամարին

փոխանցել 105000/ մեկ հարյուր հինգ հազար/ դրամ՝ Գայանե Ալբերտի Ալեքսանյանի ԿՏ և ՄՌՏ հետազոտության համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 727Ա

22 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՏՈՆՈՅԱՆ ԱՐՍԵՆ ԱՐՄԵՆԻ»-ԻՆ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի 15-Ն որոշումները և անհատ ձեռնարկատեր «ՏՈՆՈՅԱՆ ԱՐՍԵՆ ԱՐՄԵՆԻ»-ի հայտը (մուտք՝ 2026 թվականի մայիսի 19-ի N 7782).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անհատ ձեռնարկատեր «ՏՈՆՈՅԱՆ ԱՐՍԵՆ ԱՐՄԵՆԻ»-ին 2026 թվականի մայիսի 20-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար տալ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Մարգարա խճուղի 5 հասցեում հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 160 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին Արսեն Արմենի Տոնոյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 728Ա

22 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

«ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի 15-Ն որոշումները և «ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2026 թվականի մայիսի 14-ի N 7416).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» ՍՊ ընկերությանը տալ 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Աշտարակ խճուղի 2/4 հասցեում ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն (Թույլտվություն N 161 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 729Ա

22 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

«ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի 15-Ն որոշումները և «ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2026 թվականի մայիսի 14-ի N 7415).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» ՍՊ ընկերությանը 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար տալ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Աշտարակ խճուղի 2/4 հասցեում սեղմված բնական գազերի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 162 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ սեղմված բնական գազերի վաճառքի թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Recoverable Signature

Սարքագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 730-Ա

22 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը,
որ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում առկա են համայնքային ծառայության թափուր պաշտոններ,
իսկ դրանց համալրումը անհրաժեշտ է համայնքի լիարժեք աշխատանքային գործունեության համար.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում առկա համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացնել մրցույթներ, ըստ սույն որոշման հավելվածի:

2. Մրցույթների տեխնիկական սպասարկումն իրականացնելու, մրցութային հանձնաժողովի աշխատանքների բնականոն ընթացքը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգով սահմանված այլ դրույթների իրականացումն ապահովելու նպատակով մրցույթների անցկացման պատասխանատու նշանակել աշխատակազմի փաստաթղթաշրջանառության և մարդկային ռեսուրսների

կառավարման բաժնի պետ Դավիթ Լալայանին և համակարգչային աշխատանքների պատասխանատու նույն բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Անի Բաբաջանյանին:

3. Ապահովել համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հայտարարության հրապարակումը՝ բովանդակության մեջ ներառելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի հուլիսի 8-ի դրությամբ հրապարակված լիցենզիա ստացած և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանկը:

4.Հայտարարությունը հրապարակել համայնքի պաշտոնական համացանցային կայքում, ինչպես նաև հայտարարությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝ http://www.azdarar.am պաշտոնական համացանցային կայքում:

5.Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 731Ա

22 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

«ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի 15-Ն որոշումները և «ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2026 թվականի մայիսի 14-ի N 7376).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» ՍՊ ընկերությանը 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար տալ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Էջմիածին մայրուղի 9/1 հասցեում սեղմված բնական գազերի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 163 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ սեղմված բնական գազերի վաճառքի թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Recoverable Signature

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 732Ա

22 մայիսի 2026 թ. ք. Էջմիածին

«ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 32-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 23-ի 15-Ն որոշումները և «ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի հայտը (մուտք՝ 2026 թվականի մայիսի 14-ի N 7381).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՄԵԼԻՆԵ-ԷՄԻԼԻԱ» ՍՊ ընկերությանը 2026 թվականի (ընթացիկ տարվա) համար տալ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Երևան-Էջմիածին մայրուղի 9/1 հասցեում ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն (Թույլտվություն N 164 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Recoverable Signature

Ստորագրող
ԼԵՈՆԴԻՐ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

X

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Signed by: YAYLOYAN LYUDVIK 3805900589 **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**